

14709

83

891.99

4-83

15421

ԺՌԻՌ-ԿՈՃՈՊԱՆԵՐՔ

2003

1897

3953

831.99

G-8323

u.m

ԺՌԻՌԿՈՃՈՊԱՄԵՌՔ

ԲԱՆԱՍՅԵՆՆԱԿԱՆ ՎԷՊ

ԳՐԵՑ ՆՇԻԿ ԵՐԷՑ.

1001
9943

Հանդիստ Ձեզ ուրեմն, ո՛ր անմահ Հոգիք,
Փամանակ Հասեր, որ գուր ևս տօնուրիք,
Որպէս Վարդանեան խնկելի Հոգիք.
Թէև չունիր գուր որոշ գերեզման,
Ելլ Հայ ազգի սիրտ Ձեր անմահ անուան
Համար պատրաստ է մինչև յաւիտեան :

1897




Ի Նշանս իւր անկողնս վաս
ն ի նշանս իւր անկողնս ՆՊՏ.

Այ. Զրոյնս իւր անկողնս

Իւր անկողնս

1897 Յունիս 29

Ի Նշանս իւր անկողնս



Որ ննջեալ յուսով յատուերաւ խաչիս,
Իմնս կոյս անմեղ, պաշտող նշանիս.
Սան հարսնացելոյդ ի Յիսուս Քրիստոս,
Եւ ի յիշատակ ժուս-կոճոպելոյդ,
"Ճուսկոճոպակուս" կանգնեն Մահարձան,
Տեար Թաղէոս և Սրբուհի Տիկին,
Բարեպաշտ ծնողք քոյդ Լմատունեանց:

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆՅԻ ՀԱՅՐ ԵՒ ՈՐԴԻ

Շտապե՛ր, որդեակի, փախչինք այս տեղէն,
Քիւրդը կատաղեր, կաւերէ՛ մեր շէն,
Չի խնայեր մեզ, չ'իշխեր մեր բարիք,
Թէ՛ քրոջն էնք մենք և իւր դրացիք :
— Սպասիր, հայրի՛կ, եղբարքս ու քոյրերս
Մօրս հետ պիտի դան, ծակեցաւ ոտներս,
Քի մոռցայ ի տան ոտացս ամաններ.
Թէ՛ չհասնեն մեզ մայրս, եղբարքս ու քոյրերս,
Չեմ իզար քեզ հետ, թէ՛ հոգիս հանես :
— Չէ՛ս տեսներ, որդեակի, կը վառուի մեր տուն,
Մայրդ ու քոյրերդ փախան շէխի տուն,
Եղբայրներդ արդէն սպանուան պիթուն :
— Դարձեա՛ւ քրտի տուն, չէ՛ որ կրսպանէ.
Միամիտ հայրիկի, դու չտեսա՛ր մի թէ՛
Էն առջէն գնդակի, որ հասօն զարկեց
Իւր քիրուայ միսօն տանտից փար բերեց :
— Ապա ի՞նչ անենք, որդեակի, ու՛ր փախչինք .
Պաշարեր են մեզ, ուրիշ ձար չունինք,
Քրդաց բնութեան դու լաւ ծանօթ չես .



Նոցա տուն փախչող հայոց չեն փասեր:

— Սխալ ես, հայրի՛կ, մի թէ չե՞ս յիշեր,

Քաղքցի խօճէն երէկ ինչ կասեր.

Վալիպ փաշի տան քանի՞ հարիւր մէկ

Փախչող հայերուն արին արիւն ներկ.

Փախչինք էն սարեր, հոն կը պահուինք մենք

Եղատ, անվտանգ, քան քրդաց դեղձանք:

— Երշարոյս բացուեց, կը տեսնեն մեզ քրդեր,

Շուտ արա որդեակի, հազի՛ր իմ արեւներ,

Եհա կ'երեւին կատաղի խումբեր,

Դեռ չէ դատարեր հրացանի ձայներ:

— Հայրի՛կ, տե՛ս, տարան դեղն տաւարներ,

Ենցան դէպի վեր, չեն զար մեր կողմեր,

Եհա կ'երեւին սուրուլս նիզակներ.

Թէ կուզես, փախչինք մանենք էն պրեր,

Ուր մեր դիւզացիք շատ են դնացեր:

— Քիւրդեր քաջ դիտեն սարերու ծակեր,

Եւարից յետոյ, կ'երթան էն տեղեր,

Վռուի տարուան պէս կը փակեն պրեր,

Ուր թշուառ հայոց բազմութիւն մտեր:

— Փախչինք ի քաղաք, էնտեղ զօրքեր կան,

Աը տիրեն մեզի, թէ մեզ ճանչնան,

Երե փագն եղեր, քիրուի տուն չերթանք,

Քանի ճամբա կայ, փաղենք դեհ քաղաք:

Հայրը հաւանեց որդւոյ խորհրդին:

Տրեխներ հանեց ու հազաւ որդին.

Եպա սկսեց լրտեսել չորս դին,

Որ որդին անփնաս տանէր մէջ քաղքին:

Փշերու, քարի մէջ վարժուած ոտքեր,

Իսկի չէր զգար թէ փուշ կը խրէր,

Քարի կը զարնէր, տաք հողեց կ'այրէր.

Եւ ազբիւրանման արիւն կը հոսէր.

Նա կը ջանար, որ որդին աղատէր

Եւ իւր միակ յոյս, *) ժուռկոճոպ չ'լինէր:

Ենցան հայր-որդի՛ լեւներ ու ձորեր,

Եւ ամէն քայլին՝ արիւնոտ դիեր

Շէքերով, հասան մինչև Յայնկոյսներ.

Ուստի կերեւէր քաղաքի տուներ:

Եստանօր՝ հարցուց որդին ախուր հօր,

— Հա՛յր, մի՞ թէ զօրքով լը քաղաքի հայոց

Արցին փասել էն անդութ քիւրդեր,

Տե՛ս, ահա կը վառուին հայոց սուրբ ժամեր,

Իս ի՞նչ ծուխեր են, էս չէ՞ Յայնկոյսներ,

Ինչո՞ւ չ'երեւիր նորա դմբէթներ:

— Դառնանք ետ, որդեակի, բարձրանանք սարեր,

Օ՛րմբ—զրմբ մազարէն լեցուած են քիւրդեր,

*) Տհաս պտուղ բաղելուն, յժուռկոճոպ եղաւ « աստմեն վանեցիր, իսկ մայրերը՝ որդւոց վերայ բարկացած ժամանակ յժուռկոճոպամու էլնես » ասում են, շեշտելով:

Ենդ ամբարեր են հայոց աւարներ,
 Տե՛ս, կ'օգնեն միմեանց զօրքեր ու քիւրդեր,
 Յայնկոյսներ վանուց զարդեր և զոջքեր
 Չեռքէ ձեռք տարով կը բառնան սայլեր :
 Չէ՛ս տեսներ, որդի՛, իւղով կը լուան
 Եամատան պատեր, և ինչպէս մեր տան,
 Ե՛նպէս էլ սմա կրակ պիտի տան,
 Փակտինք, էլ հէրիք մեր աչքեր տեսնեն
 Սոյն այս զգուելի, անգութ տեսարան.
 Ե՛նպէս թուի ինձ՝ թէ անխիղճ՝ Սուլթան
 Պիտի աւերէ ամբողջ հայաստան :
 Հեռելի ինձ դու մանենք յայս ջրտան,
 Կամ թէ դիմացի այն խիտ ծառաստան :
 Լչ ձար չը մնաց, որդեակի, մեզ տեսան,
 Թող մեզ էլ մորթեն մէջ էս անտառին,
 Չ'ուրանանք հաւատ մեր լուսաւորչին.
 Մ'ի գուցէ վախնաս, մահ շատ հանդիստ է
 Քան սոյն աւերակ վայրեր տեսնելէ :
 — Հայրի՛կ, տե՛ս, ահա վարդապետ, տէրաէր,
 Որք ժամարարի հանդերձ են հագեր,
 Մէկի ձեռք նիզակի, միոյն դաւաղան,
 Սկիհն և խաչեր, բուրվառն և խաչվառ
 Չիոց թամբերու կողերէն կախած՝
 Նստեր են վերայ՝ դէպի մեզ կ'ուզան :
 — Քրդերն են, որդեակի, հանդերձներ հագած,

Ի ծողը, նախատինք քրիստոնեայ աղբաց,
 Ուր այժմ անտարբեր, եւրոպա նստած,
 Միայն կը լսեն հայոց կոտորած :
 Ե՛չուենքդ փակիր որդեա՛կ, մօտեցան,
 Ե՛հա կուղղեն մեզ իրենց հրացաններ :
 Չ՛գեստաւորեալ եկեղեցականք
 Հարցուցին սոցա, - ո՞վ անհաւատներ,
 Հաւատ կուրանաք, թէ ձեր միւս եղբարց
 Պէս կը փափաղիք մեր սոյն դնդակաց :
 Հայր-որդին խիոյն խաչակնքեցան,
 Փակեցին աչիունք, միմեանց փարեցան,
 Եսին խփեցէք մեզ ձեր հրացան,
 Չենք ուզեր տեսնել ձեր պիղծ կերպարան :
 Կեղծ քահանաներ սաստիկ կատղեցան,
 Երբ որ լսեցին այս խիստ պատասխան,
 Լչ չը խօսեցին, հրացան զարկին,
 Որոց անկենդան դետին թողուցին
 Մէջ Յայնկոյսներայ բարդի անտառին,
 Ուր ամեն ծառի տակ պառկեր էին
 Ենթիւ, անհամար ժուռկոճոպամեռ
 Քաղաքացի և դիւղացի հայեր .
 Ի շարս որոց, մեծն Պարթևեանց
 Յարու թիւն աղան և Թէրլէմէզեանց
 Կարապետ աղան, նոյնպէս Սօլախեանց
 Քաջ երիտասարդ և ընկերք նրանց ,

Այց իբր հեղինակ ապստամբութեանց,
 Ոտիկան զինուորք բանտից տանելով,
 Չարդ ու բուրդ արին օրով-ցորեկով,
 Իրենց պատրաստած զուլ-բուլթ սուրերով.
 Որոց մարմիններ դազանայ, թռչնոց
 Աերակուր դարձան, իսկ ոսկերոտիք
 Դեռ մինչև այսօր անթաղ կը մնան.
 Շատերու ձեռք, ոտք շուներ համարձակ,
 Փողոցէ փողոց, զիւղերէ ի զիւղս,
 Իրարու բերնից յափշտակեցին,
 Մինչև պարսկաստան տարան հասուցին:
 Լչ տաճիկաթաղեր և քրդազիւղեր,
 Որպէս և հայոց աւերակ զիւղեր,
 Շուն չէր մնացեր, որ հայոց դիեր
 Աշտապինդ կերած՝ չէին զիրացեր:
 Եմենից դառնէ համիտեէ յօրաց
 Վարազայ վանքում գործած չարութիւնք,
 Ուր ամենայն ինչ կրակի տարով,
 Միաբանութիւնը սրով ջարդեցին,
 Որոց զիակներ յազբիւսներ քաշած,
 Սուրբ Եւտարան զրկերը զրին,
 Ոմանց արանգամ և լեզուն կարած,
 Հակառակ միմեանց ... փոխարինեցին:
 Հապա քեօռ Սէլճն, քանի՞ մի հայոց
 Խաբելով տարաւ մէջ Հայկավանից

Եւերակներուն մորթեց ու ջարդեց,
 Եյն, որ ցայսօր հայերու հացով,
 Օղիով, զինուով և ամեն խնամքով
 Մեծացեր էր, այց երդօք խաբելով,
 Իբրև բարեպաշա հայ ձեւացեր էր.
 Ո՞վ կարող էր զայն տաճի՛կ անուանել,
 Ամհետ թիւրքերէն երկու խօսք խօսել
 Իսկ այսօր, Մօլեց, Շեխից խրատուած՝
 Մոլեռանդ և խիտա Ջեւի-Ընան դարձած,
 Իւր բարերարներ և նախկին ընկերք
 Չարդ ու բուրդ կանէ, չի հողենար կիրք,
 Եյս թշուառական, իւր հողւոյ նման
 Ունէր մի տղեղ քոնած կերպարան:
 Եղնի՛ւ հայ զաւակ, էլ մնաց չարիք,
 Որ ի դործ չ'զրին վէր հայոց զլին.
 Հայից քիւրդ դարձած վատ էլազասիք:
 Թէ ամեն պատմեմ, երկինք կը սոսկայ,
 Եւ քո հայկական սիրտ պիտի չ'սոսկայ,
 Եյս պատմութիւններս կարդա՛ւ՝ հասկացիր,
 Լչ արև թիւրքին հաւատ ընծայիր:

ՎԵՅՆՕՐԵԱՅ ԱՆԿԱԽՈՒԹԻՒՆ
ԱՅԳԵՍՏԱՆԵԱՅՅ ՎԱՆԱՅ ԵՒ ԿՈՏՈՐԱՍ:

Հազար ութ հարիւր ինսուն և վեց թիւ
 Մերոյ փրկչական և Յունիս ամնոյ
 Օրն երրորդի, ցորեկեան ժամի
 Ղիշա չորս և կէսին, ըստ գործածութեան
 Ժամացոյցներու, որ ի Տամկաստան,
 Ջարգն սկսեց ի Վասպուրական,
 Ուր Քե-րր, Թե-րր, Քնը-, Լազ Չերէկ խուժան,
 Որպէս վարժ կուտոզք անտառաց, լերանց,
 Ըռակելքան զթիւս վաթսուն հազարաց,
 Սպառազինեալ խուժեցան յանկարծ
 Վէր Ըյգեսասանի հայոց թաղերուն,
 Եւ ուր որ անդէն հայերուն զտան,
 Վտորեցին և կողպուտ տարան,
 Եւ իրենց զբացի հայոց տուներուն
 Վրակի տալով՝ արին ցիր և ցան,
 Ըյլ կեզրոնական թաղորայք համայն,
 Ընդ ձեռն պետաց երբեակ կազմութեան,
 Եւ նոցա արի կուտոզ զինուորաց,
 Վեցն օր քաջութեամբ — Ընկախ Հայաստան —
 Հրատարակեցին ի Վասպուրական:

Պուցէ հենդ կամ վեց դարերէ ի վեր
 Հայոց ժողովուրդ տեսնել չէր կրցեր
 Ըյնպէս երջանիկ և ազատ ժամեր,
 Քան անկախութեան այն վեցն օրեր,
 Օրի ց'այսօր ո՞ր ազգ լսեր ու տեսեր,
 Թէ պարզ հրացանից՝ թնթանօթ յաղթուեր,
 Ըյ'ո, զի քաջք մեր իբրև անձնազիր,
 Խմացեալ մահուամբ էին դուրս ելեր,
 Ելեքորական դիւրաշարժութեամբ
 Թնթանօթաձիք թուրքի վատ զօրաց
 Հարուածներ տալով, երկու թնթանօթ
 Ել զբաւեցին և մինչ երկու օր
 Ընդ իշխանութեամբ իւրեանց պահեցին,
 Համայն աշխարհի ցոյց տալու համար,
 Թէ ամօթ չէ, որ ուժով զօրաւոր
 Մի մեծ պետութիւն, հպատակաց հեռ
 Խտաիւ կը վարուի, և թնթանօթով
 Վանէ բնաջինջ այն ժողովրդեան,
 Որոց վաստիած արեան քրտինքով
 Պահպաներէ ցարդ թագաւորութիւն:
 Իսկ երբ թրքասէր նենդ գիպլոմասեան,
 Հակառակ խղձի, մարդասիրութեան,
 Պահ մի թրքացաւ, և որոց նման
 Խտարեց խուժերուն, որ զիրքից ելնան,
 Որպէս թէ նոցա պահանջած պայման

Պիտի ընդունուի՝ թէ զիրքից դուրս գան,
 Ամբ թէ զէնքերը այլևս վար զնեն,
 Ար դատրի խուժան՝ և կազատուի Ա՛նն :
 Եռապետութիւն երբեակ միութեանն,
 Ի սէր բնակջաց Ա՛սպուրականի,
 Իւրեանց զէնքերով թողին հեռացան
 Դէպի Ա՛րազայ անուանի լեւան
 Ընմատչելի և անառիկ վայրեր .
 Եպա թուրք խուժան արձակ—համարձակ
 Մտաւ հայոց թագ, քանկից ու վառեց
 Ըմենարնաիր զեղեցիկ տուներ :
 Իսկ խաբուած խուժեր՝ Ա՛րազայ Ա՛ւերան
 Բարձր կատարէն նայեցին, անսան
 Ողբալի այրումն հայրենի տան,
 Ուստի հառաջանք, լաց և նզովներ
 Թափելով նմա, որ պատճառ դարձաւ
 Իւրեանց քաղաքից լեռներ քաշուելու,
 Եպա վճռեցին ի պարսս մեկնելու :
 Եստանօր սաստիկ վէճ ծագեց յինքեանս,
 Երմենական և Ն՛չակ—Ղաշնակեան,
 Թէ սոցա փաստեր արդար ըստ ինքեանց,
 Դիւանադիտաց թողում, որ քննեն,
 Օ՛րի ականջալուրք՝ այսպէս կը պատմեն,
 « Ընդհաններ թողունք, որ դառնան քաղաք » .
 Աստէին Ն՛չակ, որպէս և Ղաշնակ .

Իսկ Երմենական, կասէին «տանենք,
 Օ՛րի այսքան աղնիւ երիասարդաց
 Եւ գոյրոցական սուրբ պատանեկաց,
 Թողումք, որ խուժանք կոտորեն, պղծեն,
 Ոյց օրինակներ շատ տեղ գործածեն,
 Իսկ Ն՛չակք, Ղաշնակք, կ'պատասխանէին,
 Թէ « մենք անպատճառ ի ճանապարհի,
 Պիտի պատահինք միշտ կոխունքի,
 Նորա չեն կարող ողջ մնալ յահի :
 Եւ այս, խուժերը բաժնեցան երկու .
 Երմենականները ութ հարիւր հողով,
 Ղաշնակք և Ն՛չակք հարիւր զնուորով,
 Եռաջինները Եղբակու ճամբով,
 Իսկ վերջինները՝ Սարայի լեռնով,
 Դիմեցին շեռակ զէպի Պարսկաստան,
 Ուր ամբողջ ութն օր զիշեր և ցորեկ,
 Քաղցէ, ծարաւէ, ցուրտէ, կարիւրտէ,
 Եւ սոտ տեղ անձրևէ և զնդակներէ,
 Չը կարողացան իսկի՛ աչք բանար
 Մինչև որ հոտան Բարդուղիմէ վանք
 Եւ Սարայ դաշտի քրդազիւղ տեղուանք,
 Ուր այլ ևս քաջաց ձեռքեր թուլացան,
 Օ՛րի զինուց պաշարքն էլ սպառեցան .
 Ուստի յուսահատ՝ սոցն փորձերն արին,
 Եմբողջ հրագէներ քարերուն զարկին

Եւ անկերպարան վիճակում գրբին,
 Որ թշնամիներ չը գործածէին,
 Քաշեցին սուրեր, զիլքից դուրս ելան,
 Եւ մի յարձակմամբ քիւրդերուն հասան,
 Ուր իւրեանց թուով քիւրդ, զորք ջարդերով,
 Եւս թափեցան իրենց արեան մէջ,
 Իբրև ճշմարիտ անձնուէր զինուոր.
 Որոց յիշատակ, սրբազան գործեր
 Պիտի լեցունեն պատմութեանց էջեր:
 Եւս նահատակեալ խումբերու Պետեր,
 Եւն Մհրաիչ, Պետան և Մարտիկ,
 Ուք կառարելով իւրեանց սուրբ պարտիք,
 Սլացան առ աէր՝ յուրախ կեանս անվերջ:
 Թէ սոցա չխաբէր այն վատ պաշտօնեան,
 Գհոցէք թէ ցայսօր Սան—Սասպուրական
 Եւն յարձակմանց պիտի դիմանար,
 Կամ բողբոլին աւերակ դառնար:
 Թէ չայատանի ամեն քաղաքներ
 Սանայ հաւասար գէթ կարողանար
 Պաշար պատրաստել, հակառակ այնքան
 Խուզարկմանց և խիստ հարածանքներուն,
 Եւս դառն կենաց և դէշ օրերուն
 Չէինք հանդիպեր, կամ թէ հաւասար
 Սլինէր մեր կորուստ որպէս կռուող տարր:
 Չեն մոռանար քեզ, ո՛ր Եւեախեան,

Երեսուն և վեց ազատեալ զինուորքդ,
 Ուք կիսակենդան մինչ Պարսից սահման
 Խոտածարակ լեալ՝ մազապուր եղան.
 Նոյնպէս և զՉեղ՝ Պետո՛ և Մարտի՛կ,
 Խակի՛ չի մոռնար Ետրին ճարպիկ,
 Որ կրցաւ փակել ամենուդ աչքեր
 Եւ պրծաւ փախաւ մինչև Պարսկաստան,
 Ուր նախկին ընկերք իւր Երմենական
 Քանի օր առաջ էին ժամաներ,
 Որպէս անղեղու և մեռեալ դիեր,
 Ուք ի շնորհս Պարսից Մուզլաֆէրէտին
 Երեզակնափայլ թաղաուր Եւհին,
 Եղատ, համարձակ դեռ կան և կապրին,
 Գրեն և պատմեն զարարմունս Չեր,
 Թէ ի ճանապարհ և թէ հայրենիք.
 Կը խոստովանին նոյնպէս Սանեցիք,
 Թէ ցարդ կենդանի հայեր կան ի Սան,
 Նոցա զոյութիւն ձեզ են պարտական.
 Օր գուք կռուելով շահեցաք միջոց,
 Փախուցանելու ժողովուրդս չայոց
 Չիւպատոսարանք Ռուսաց և Պարսից,
 Գաղղիացւոց և Ենզղիացւոց:
 Պէտք չէ մոռանալ հիւպատոս-թարգման,
 Մեծազօր ազգին Ռուսաց պետութեան,
 Եստիճանաւոր և Եղնուական,

1007
 1063



Ա սեմ Արապեա Չիլիկարեանց տան .
 Կոյնպէս և պարսից Միրզէ—Հիւսէն Խան ,
 Ոյք ձեր մեկնելէն անմիջապէս վերջ ,
 Հասան փրկեցին շատ մարդերու կեանք :
 Հանգիստ Չեզ ուրեմն, ո՛ր անմահ հողիք ,
 Եւամանակ հասեր, որ դուք ևս ածնուիք ,
 Որպէս Ա արգանեան խնկելի հողիք .
 Թէ և չունիք դուք որոշ գերեզման ,
 Եւ չայ ազգի սիրտ Չեր անմահ անուան
 Համար պատրաստ է մինչև յաւիտեան :

ԲԱՂԻՇԵՅԻ ՄԱՅԻ ԵՒ ԱՂԶԻԿ .

Մի քար-այրի մէջ՝ երկու հրեշտակներ
 Օրերով փակուած, դուրս չէին ելներ ,
 Մայր-աղջիկ էին այս սրբուհիներ ,
 Ոյք կոտորածից հազիւ ազատուած ,
 Եւս դժուարաւէլ այրն էին փախած :
 Լուսինն էլ կարծես իւր աղօա լուսով ,
 Համբոյր կը քաղէր մարտիրոսներէն ,
 Իսկ Սահակ *) թռչուն՝ լի հին ցաւերով ,
 Թփերու տակէն , ծառերու վերուէն ,
 Երբեմն հեռուէն , երբեմն էլ մօտէն ,
 Սղաւոր ձայնով կը կանչէր՝ « Սահակ » .
 Թագուհին յիշեց իւր նախկին վիճակ ,
 Եւ նշանեալ կոյս եղած ժամանակ ,
 Ուստի հեռեկայն ուղղեց առ Սահակ :
 « Դարձեա՛լ կը լսեմ քո ախուր ձայնիկ »

*) Սահակ թռչունը գտնուում է միայն Բաղէշ
 քաղաքում, մի ճնճուղի մեծութեամբ, որը երգում
 միայն գիշերները. չսողը նախ կարծում է թէ ճախ-
 րակի ճոնչիւն է, այլ գիշերային լուսեան մէջ՝
 երբ մարդս ուշի ուշով մտիկ անէ, յայնժամ հազիւ
 ուրեմն լսում է իրար ետեւից կանչող սրտագրաւ
 ու ախուր ձայներ, որ որոշ կերպով հնչում է .

Ի՛մ փոքրիկ, սիրուն, սղաւոր թռչնիկ.
 Երգե՛օք, ի՛նչ աեղիցդ ես վերաւորուելր,
 Որ հանդիստ չունիս դու ամեն գիշեր,
 Լըր՛կդ, որդի՛քդ, ծնո՞ղքդ են սպանուելր.
 Չեր ցեղի միջն էլ կան չար նախանձներ,
 Որ գիշերները միայն կը երգես,
 Ի՛ն էլ պահ մտած՝ թփերու միջէն:
 Յորեկներ գբեղ չը կրցի անսնել,
 Ոչ էլ արևով ձայնիկդ լսել,
 Խսիկ մի՛ փախնար, ապահով իղիւր,
 Որսորդներ գբեղ չեն կարող դանել,
 Ոչ էլ վշտահարք, սիրով ամանջուողներ.
 Ինչպէս որ ե՛ս էլ մանկութեանս օրեր,
 Եւ նշանեալ կոյս եղած տարիներ,
 Առգայի գբեղ որոնել, դանել,
 Մանաւանդ դարնան լուսնակի լուսով,
 Քանի՛ դիտ՝ կուզ—մուզ, ուշիկ սողալով,
 Փորիս, թաթերուս վերայ իյնալով,

» Սահակ, սահակ «: Այս թռչնոյ մասին պատմում են Բաղիշեցի պատաններ, » Ժամանակաւ մի Սահակ անուն տղայ իւր բրոջ հետ պտտում է գետեզր, սահակի ոտքը սահում է և գետն է ինկնում. երբ քոյրը հետևում է եզօր, Աստուծանից թռչուն է գտնում, և զօր ու գիշեր անդադար կանչում է եզօրը «: Ամանք էլ ասում են » սիրահարներ են եղել և ոչ քոյր « եզբայր «:

Մօտացերեմ քեզ, որ բռնեմ սիրեմ.
 Հակառակ սրտիս բունն բաղձանաց,
 Թռչելիզ անդամ անսնել չեմ կրցած:
 Ե՛րս, քանի՞ մարդիկ վիշտերով լեցուած,
 Երբ գիշերները քնել չեն կրցած,
 Նոցա սրտերը ձայնովդ ես ծակած,
 Ինչպէս թշուառիս շատ տիր պատահեր,
 Երբ սոց ձայնիկդ ականջս է ինկեր,
 Լչ էն գիշերներ չեմ հանգստացեր:
 Ի՛մ սիրուն սահակ, լեզուդ բաց արա՛,
 Ո՛ր սահակ կուզես, ցաւերդ ինձ ասա՛,
 Սահակ սրբաղա՛ն, թէ սահակ Մարդպան՝
 Որ սրտիդ խորէն կը կանչես նորան,
 Մի՞ դուցէ դու էլ սիրահար ունիս,
 Ինչպէս որ մամիկս էլ պատմեր է զիս:
 Իայց չէ, սխալ են նոքա, որ ընդիս
 Աը կարծեն թէ դու սիրով ամանջուումես.
 Ե՛յո, ամանջուումես, բայց ոչ չար կիրքից,
 Դու կորուսեր ես քո հին քաղաքից,
 Ե՛յն աղնիւ փեսան և սուրբ թագուհին,
 Որոց պալատի դուստն, երզուհին
 Դու էիր եզեր քո անուշ ձայնով.
 Ոյց առակներով և քաղցր երգերով,
 Գուշակեր ես թէ՛ պետի դոյ մի օր,
 Որ դուք էլ ինձ պէս իրրև սղաւոր

Պիտի բանդարիուիք մէջ ձեր վանդակին,
 Եւ ձեր որդիներ տանջուին, հալածուին,
 Արոց ապաստան քարայրեր լինին:

Դէ կանչէ՛, Սահակ, քանի որ կուզես,
 Վ իճակս ինձ ուսոյց թէ զո՞վ կը կանչես:
 Ենպատճառ որդիքդ արեանց մէջ կ'տեսնես,
 Դորա համար էլ յաւերակունս ես
 Բոյնդ հաստատեր, ուր վայես, բուես,
 Իբրև Բաղիշոյ ողբերգակ թոչուն,
 Ար առաւել քան Հինդ հարիւր քառասուն
 Տարի աւերակ կը տեսնես քո բուն,

Ես հաւատացի, Սահակայ քոյրն ես,
 կանչէ՛ ու երգէ՛, Սահակ, ո՞ Սահակ,
 Մինչև որ յառնէ Սահակայ դուակ,
 Եղատէ, շինէ Բաղիշոյ քաղաք:

*
 *

Թաղուհին և իւր Մարօ կոյս դուակ,
 Մնացին այնպէս հինդ զիշեր, ցորեկ:
 Մօր տարիք քառասուն, աղջկան տասն և հինգ,
 Դիմօք միանման, որպէս մայր-աղջեկ,
 Եղջեկ նեղուելով ցրտից և սովից,
 — Ի՞նչ անենք ասաց, ո՞ քաղցրի՛կ մայրեկ,
 Ենջուր և անհաց, այս տեղ կը մեռնի՛նք,
 Երե՛կս քարից մեզ ցած զրբենք,
 Դազանաց, թոչնոց կերակուր լինինք,

Վրան քաղցէ, ցուրտէ այսպէս տանջուինք,
 Սամ լըրբ թուրքերէն առեւանդուինք:
 Եզոս դու-ն վերուց ու նայեցաւ դուրս,
 Եւ ուրախութեան մի մեծ ճիչ հանեց,
 Եւ ետ դառնալով՝ այսպէս ասաց մօր,
 — Մայրի՛կ, նայի տե՛ս, մեր դրկեց Դաճօր,
 Եհա ուղղակի դէպի մեզ կուգայ,
 Դուրս ելնենք աստի, որ զմեզ տեսնայ,
 Ես նահատակ հօրս խիտ բարեկամն էր,
 Եթէ դէպքի օր մեր տուն դանուէր,
 Չէր թողուցեր, որ հայրիկս սպանուէր:
 Փորձառու մայրիկ, տեղեակ այն դազանեաց,
 Ար նշմարած էր դաճօրի իւրեանց
 Տուն դանուելու վարմանց և շարժմանց
 Եղանակաց մէջ, որպէս կոտորած եղած ժմանակ:
 Դիւանաղիտի լըրջ եղանակաւ,
 Սաստեց իւր աղջկան, և ապա դարձաւ,
 — Եղջեկս՛, իմ վախնէ աւելի քեզնից,
 Օ՛ր սորա թուրքեր չեն հայոցս նման,
 Աջ կրօնք ունին, ոչ բարոյական,
 Եյս դաճօր մեր տուն եկած ժամանակ,
 Ար ցանկար տեսնել ինձ և քեզ միակ,
 Մեր քաղաքի թիւրք և քեւրդ միանուադ,
 Հայ կանանց, աղջկանց ունին շատ փափազ:
 Չե՞ս յիշեր՝ զա՛ւակ, որ ամեն գիշեր

Առուանդէին կին, հարս, աղջիկներ,
 Շունչք քաշեր քեզ, էք քունջ կծկուեր,
 Լաւ է որ մեռնինք ցրտից և սովից,
 Քան թէ զբիւրնք մեր անդին պատուից:
 Դեռ մայր խրատներս չէր վերջացուցեր,
 Այրի դէմ հասան մի խուճի մերկ կիներ,
 Եւ զի վշտահար կոյս աղջիկն անմեղ,
 Կը դիտէր զգաժօր անշարժ կեցած տեղ:
 Նա էր որ տեսաւ այս պիղծ տեսարան,
 Ուստի և գոչեց — Մայրե՛կ, տես, տարան
 Մի խուճի մերկ կանանց, արդեօք՝ ուսալի՞ են,
 Լն ի՞նչ խայտառակ վիճակի մէջ են:
 Երկինք, հերիք չէ՞, ինչե՞ չես սոսկար,
 Մեր ազգի վերայ ինչե՞ չես գթար,
 Որպէս Սոթոմայն՝ պատժէ՛ և այս տարր:
 Լն լիբբերու պե՛տ՝ Մայրիկ, կը տեսնե՞ս,
 Անդգամնէ՛ տես, եթէ աչք ունես,
 Ա՛նչ, անխիղճ թուրքեր, չե՛ն էլ ամաչեր:
 Այս ամօթալի և անօրինակ
 Լիտի տեսարան անցաւ սարի տակ,
 Խակ մայր և աղջիկ թողին զքարայր,
 Փախան ու զնացին դէպի ուրիշ սար,
 Ո՞ք զիշեր, ցորեկ ինկած քարէ քար,
 Երեք օրէն վերջ՝ հասան Ախթամար.
 Եւ անտի նաւով զնացին ի Ա՛ն,

Ուր կը դանուէր մի աղնիւ իշխան,
 Ար շատ որբերու և այրիներու
 Աղեր էր պաշտպան, ուր և Քաղեշու
 Մայր և աղջիկը պատասպարուեցան
 Խբրև անգամներ յիշեալի ճոխ տան:

ԿԱՐՆԵՅԻ ԵՂԲԱՅԻ ԵՒ ՔՈՅԻ.

Կարնոյ ցուրտ լեռներ ձիւնով պատած էր,
 Ոյց միոյն վերայ, միմեանց ձեռք բռնած,
 Մի քոյր և եղբայր կ'վազէին դէս, դէն,
 — Ելապ'ր իմ, ասաց քոյր եղբօրն ընկձած,
 Ոտքերս կտարեցաւ, այլ ևս չեմ կարող
 Շէքեղ զիակներ, արբե՞ծք, մեր տեսած
 Երա՞զ է թէ ճիշտ, տես՝ էս սարի կող,
 Մարդոց մարմն'ն են, թէ իմ կոյր աչաց
 Եյնպէս ցոյց կուտայ որպէս երկնչող,
 Մի՞թէ մարդկութիւն այնքան անդու՞թէ,
 Որ իւր նմանեաց՝ զուր տեղ կը ջարդէ.
 Չեմ հաւատար թէ տեսածներս ճիշտէ,
 Օ՛ի երազոց մէջ՝ շատ հեղ տեսերեմ,
 Իբր մեռելոց մէջ մինչ լոյս մնացած եմ:
 — Դամանակ չէ՞ քոյր, ասաց՝ եղբայր քրոջ,
 Քաշէ, որ հասնինք իմ քաջ ընկերոջ,
 Որոյ միջոցաւ՝ կանցնինք սահմանէն,
 Ուր ոչ թուրքերի և ոչ քիւրդերի,
 Ու Լէզգիների, ոչ Չէրքէզների
 Երես կը տեսնենք, որ մեզ չարչարեն,
 Օ՛ի նոքա միայն Տաճկաստան զիտեն

Քրիստոնեայ Հայոց նեղել և ջարդել,
 Իսկ ի Ռաւսաստան՝ կարծողեն խօսել:
 Ուր են՝ անպարիկ, Տացուն ու Մայրիկ,
 Վարդան և աննիկ, Վարդուհն ու Վազրիկ,
 Դեռ չ'եկան չ'հասան, ազատե՞նք, անպարիկ,
 Չէ՞ որ նոքա էլ ըզ մեզ կորսնեն,
 Մինչև մեզ չ'տեսնեն, ճանապարհ կ'եղնեն:
 Ենցան քոյր—եղբայր՝ ձիւնալի լեռներ,
 Եւերակ զիւղեր, ամայի դաշտեր,
 Մինչև որ հասան Դէլիպապայ գեղ,
 Եւ յաճանապարհաց ակուր տեսարան,
 Սոցա մտաց վրոյ այնքան էր ազդեր,
 Որ Դէլիպապի քոյն էին հասեր,
 Դեռ կը տեսնէին մեռելոց դիեր,
 Մինչև որ սոքա մասն յիշեալ դեղ,
 Պատահեց և անդ կուիւ մի ահեղ,
 Օ՛ի խուժանք կառաւձ զօրախառն քրդաց,
 Շուրջ պատեց և սոյն անտոխի բնակչաց:
 Հարիւր տուն կազմող բնակիչք զիւղիս,
 Մեծ գիմադրութեամբ ցրուեցին զխուժան,
 Խմբապետութեամբ նոյն զիւղի պեախն,
 Քաջ և ազգասեր ասաց— Ղուկասին:
 Եղբայր և քոյրը Կարնոյ քաղաքին,
 Որ ներկայ էին այս ահեղ կուռին,
 Գնացին ի տես ձէնով տացուին,

Պատմեցին նմա կոտորածն Վարնոյ,
 Որմէ խնդրեցին նոյն զիւզ մնալոյ,
 Մինչև որ դատրէր Չարդն Ռասենոյ:

Թէ Հայաստանի զիւղեր, քաղաքներ
 Ունենայինք մենք Ղուկաս աղաներ,
 Մաղաչափ ապրանք չէինք կորուսեր,
 Եւ այն քան մարդիկ չէին կոտորուեր
 Թէ Դէլիպապի բնակչաց նման
 Լինէինք մենք քաջ, կազմ ու միաբան,
 Սունենայինք և զէնքեր աննման,
 Եւ մեր թշնամեաց կանէինք ցիր—ցան,
 Բայց երկու տնուոր զիւղերում անզամ,
 Դեռ ունինք մասնիչ, լիրք և անզամ,
 Ուք շինծու լուրեր՝ կառավարութեան
 Հասուցանելով, խպառ բնաջինջ
 Եւ տակն ու վերայ արին Հայաստան:

ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏՅԻ ՔՈՅՐԵՐԸ.

Համիտէ զօրքեր երկու քոյրերու
 Տիգրանակերտից գերեվարեցին:
 Եւս գեղեցկադէմ հայ աղջիկներուն,
 Միմեանց ծախելով՝ բերին հասուցին
 Մանողկերտ դաւառ՝ հասնանցիներուն,
 Եւ Սօֆի փաշա Լյաղասէն
 Նուիրեցին որ իւր կանանոցում
 Փակէր, բանտարկէր, որ յօժարէին
 Իւրեանց զնողաց կանայք լինելու,
 Եւ Մահմէտական կրօն ընդունելու,
 Մի օր երկու քոյր սոյն խորհուրդն արին.
 — Եղատում չունինք, ասաց մեծ փոքրին,
 Բնդունեմ զՄահմէն իբրև ամուսին,
 Իսկ դու ընդունիր զՎնդու թաջղին,
 Հերիքէ ծախուենք այս ու այն էլին,
 Եւ ամեն ատեն դաղսինք ու ծեծուինք:
 Փոքրը հնազանդ էր արդէն մեծին,
 Եսայ, դու զիտես, ամեն խորհուրդներդ
 Միշտ ընդունած եմ, նոյն՝ և այս մասին
 Հնազանդ եմ քեզ, զի ասածներովդ
 Ղուցէ փրկուինք մի օր այս կեանքից:

Լնցաւ մի ամիս, որ երկու քոյրեր
 Հասնանցի քրդաց կին էին դարձեր,
 Լնուամբ էլ «Լշէ, Պաթմայ» էին փոխուեր.
 Որք քիւրդ կանանց պէս համալ սովորած,
 Լմեն պահերուն ոտք, ձեռք լուացած
 Կուղ—պարզ կ'անէին, և քրդի կանանց
 Պէս հազուատ հազած, այնքա՛ն անսխալ
 Կը խօսէին, որ լեզուից հասկանալ
 Լնկարելի էր, թէ նոքա Հայից
 Դարձեր էին քիւրդ կամ քրիստոնէի
 Օւաւահներ էին, և ՚ի աղայ տիոց,
 Մինչև ցայն հասակ, մէջ Հայ վարժաւանց
 Հաւատարմութեամբ էին զարգացած.
 Սոցա կեղծ վարմունքը՝ վստահացուցին
 Ինչպէս էրիկաց, նոյնպէս Լշէախն.
 Ուստի համարձակ և ազատ թողին,
 Որ լերանց, դաշտաց զործ կատարէին:
 Մի օր երկու քոյր ելան միասին,
 Ոչխար կթելու պէրը գնացին,
 Բոտ սովորութեան համայն զիւղերու.
 Որոնք փոխանակ ի պէր գնալու
 Խնուս դաւառի Պարա-չօպան զիւղ
 Փախչիլ վճռեցին անվախ, աներկիւղ,
 Պարաչօպան դեղջ աէր Յով հաննէսին,
 Պատմեցին սոքա ջարդն իւրեանց երկրին

Եւ ամեն անցքերը, զորս զործեր էին
 Լնգութ և անխիղճ Համիտէ քիւրդեր,
 Թէ քանի՞ կոյս, հարս, կին և մանուկներ,
 Լըճավաղի և Լըճէշի զիւղեր
 Չնջին զիներով միմեանց էին ծախեր,
 Եւ քանի՞ պառաւ կին ընդ երախայս
 Ողջ-ողջ թաղեր էին ցորենի հորեր,
 Ոյց ոյորմ ձայներ ճանապարհորդներ
 Մինչև երեք օր կը լսեն եղեր:

ՄՇԵՅԻ ԿԻՆ .

Մշոյ աշխարհի այն անուանի դիրք,
 Որոյ »Օճմակ լեռ« ասեն պատմագիրք,
 Ընդ նստած էր մի մանկամարդ աիկին,
 »Օր-օր« կը ձայնէր իւր փոքրիկ աղին.
 Տարիքն հազիւ մէջ տասնւիննին,
 Հասակաւ երկար, դիմօք՝ իբր լուսին,
 Եյս սիրուն աիկնոջ պատկեր տեսնողներ,
 Եւ հրեշտակային ձայնը լսողներ,
 Սասէին, նոյն իսկ դազաններ
 Պատահին սմա, երբէք չեն վսասեր.
 Ընդանօր նստած մինակ և տխուր,
 Հեռեեալ երզը կերպէր աղեկաուր,
 «Չիւնախառն անձրև կը թափի վերէդ,
 Օր - օր, որդեակ իմ, քուն եզիր անուշ,
 Եյսօր էլ կ'երգեմ, այլ ուշակորոյս,
 Մէրիկդ եմ անտէր ու զխակորոյս:
 Դեռ չորս տարի է, որ կարիճ հայրդ
 Սիրով կապուեցաւ հետ թշուառ մերկանդ
 Օր - օր որդեակ իմ, քեզ երգէ անուշ
 Մէրիկդ անտէր ու զխակորոյս:
 Ին բաժիր մեռնեմ, խօրօտ աչքերուդ

Յօրին թորկեցիր սիրած նշանուդ:
 Թուալ զլեխ թագ, զլեխ վարդ - պսակ,
 Ընտէր մնացինք, ո՛ք քաղցրիկ զուակ,
 Երևն ու երկինք, թուրքերն ու քիւրդեր,
 Ըմէք թշնամի են մերկանդ դարձեր.
 Օր - օր որդեակ իմ, քնիր դու անուշ
 Գեղ կ'երգէ մերիկդ զխակորոյս:
 Երկու օրն անցաւ, որ դեղանի կին
 Մի թիւրքի ձեռքից պրծեր փախեր էր.
 Որոյ երկւղէն ցայն վայր հասեր էր:
 Յիշեալ լըրբ թիւրքն էր Լյօմէր - Եղեշէն,
 Ըյն, որ մկրտեալ էր յԷջմիածին,
 Յաւուրս Գեորգաց կաթուղիկոսին.
 Որ Հայոց մէջ Հայ, թուրքաց մէջ թիւրք էր,
 Երկու լեզուներ իրար հաւասար
 Գրել և կարգաւ քաջ սովորեր էր,
 Հայոց կրօնքին այնքան հմուտ էր,
 Որ քան Ս արդապետ լաւ կը քարոզեր.
 Ճամադիրք, Սաղմոս, Նարեկ, Շարահան,
 Հին և նոր ուխտը, Հայոց պատմութիւն
 Ի մանկութենէ արած էր բերան:
 Մշոյ պարզամիտ ժողովուրդ Հայոց
 Եյս անպիտանին այնքան մեծարեց,
 Որ իւր տան դռներ առջև բաց թողեց,
 Որով կրցաւ նա Հայ կանանց, աղջկանց

Եւ նոցա ամեն թոյլ սովորութեանց
 Չանօթանալ, և դադարար կազմել,
 Մինչ Սանամեանց տան արայց մուտ և ել,
 Եւ այն աստիճան էլ յառաջ դնաց,
 Որ ընդ օրիորդ գեղեցիկ Լուսնոյ
 Բաղձանքը յայտնեց ամուսնանալոյ
 Ընն աղջկան սիրով, որոյ փախազով,
 Ըմբողջ մի տարի զիշեր ու ցորեկ
 Նոցա տան դրան ճեղքուածքներից
 Ընամօթաբար արաց ճէլ ու ճէլ,
 Եւ հակառակ իւր տածած բաղձանաց,
 Սանամեանց Լուսնին տեսնել չը կարաց,
 Որոյ հետ խօսէր, և ում Հայկական
 Ընուշիկ լեզուէն խօսք մի վճռական,
 Կամ թէ վերջնական մի սիրոյ նշան
 Ընէր հաստատուն իբր դրաւական:
 Հասաւ ժամանակ, որ Լուսին՝ Ղարմբեանց
 Վաջ Սուրբաթի հետ դաղանի սէր կապեց,
 Որոյ դաղանիքը բացի Լյօմէրից
 Ղիսցած չէր ոչ ոք և ոչ նկատած:
 Յայնօր, երբ սոքա սցաւոյ խոր քաշուած,
 Ընվերջ կատակներ և սիրավէպեր
 Կը փոխարկէին միմեանց զմայլած,
 Որպէս սիրահարք Մշոյ աշխարհի
 Սովորեն առնել յայնմ հասակի,

Ուր իբրև լրտես, Լյօմէր-Եղիշէն
 Նախանձու աջօք նոցա կը դիտէր,
 Ղիչ մնաց զուրս զար և մի հարուածէն
 Ղուրբաղն ու զԼուսնն մէկտեղ սպանէր,
 Բայց երբ նկատեց Սուրբաթի համբաւ,
 Եւ անսպարտելի ուժն ու սիրան ամբաւ
 Ըտելութիւնը և վերաւորանք
 Ըհով, երկիւղով խոր սրտում պահած,
 Թողուց հեռացաւ, որպէս կատաղած:
 Լյօմէր-Եղիշէն սիրոյ նախանձէն
 Սաստիկ նեղուելով, որոշեց խիտցն.
 Պաշտօն առնելով Հեռանալ Մուշէն,
 Եւ զն քաջ դիտէր Հայերէն լեզուն,
 Սասահացուց ըզ կառավարութիւն,
 Եւ լրտեսութեան ու թարգմանութեան,
 Պաշտօն առնելով՝ դնաց Ոսկաստան,
 Եւ ապա անախ անցաւ Պարսկաստան,
 Ուր իւր պաշտօնի գեր կատարելով՝
 Ղաւաւ, վայելեց այն յաջողութիւն,
 Որպէս Տաճկաստան ունէր ապահով,
 Հայ երևեղեաց, պաշտօնէից քով:
 Ըստանօր շինեց իւր այն ծրագիր,
 Որ յղացեր էր նա Մշոյ երկիր,
 Նիւթեց, հաւաքեց գառնութիւնք սրտին.
 Եւ ապա զրեց, զրկեց Սուլթանին,

Իսկ ինք շտապաւ Մուշ դարձաւ կրկին :
 Գեռ երկու սարի հազիւ էր անցեր .
 Որ Մուրաա Լուսինն կին էր ընդուներ ,
 Եստուած պարգևեց նմա մի զաւակ ,
 Որոյ անուանեց Վաջ-Սարգ-Նմայեակ ,
 Իբրև Տարօնոյ հարազատ զաւակ :
 Վաջ-Սարգ-Նմայեակ գեռ երեք ավիս
 Ծնած էր աշխարհ , ահա աշխարհիս
 Տիրող թագաւոր՝ հանեց սև հրաման ,
 Առտուրել Մշոյ նայ ազգը համայն :
 Լյօմէր-Եղիշէն այնքան ամիսներ
 Չանք , ճիգ թափելով՝ հազիւ էր կրցեր
 Իւր չար խորհուրդներ երևան հանել ,
 Եւ քաջ Մուրատից վրէժը լուծել :
 Թէ եւ քաջ Մուրաա և իւր կին Լուսին
 Լյօմէրի նախանձը դուշակեր էին ,
 Եւ իբր նայ զաւակ միամտաբար ,
 Անբազայրութիւն նմա յանձներ էին .
 Որպէս սովոր են շատ զաւառայիք
 Նախառակաց հեռ կնքազայրութեամբ
 Նաշախլ , սեր կապել և նախկին ձգտեալ
 Յարաբերութիւնք թողուլ , մոռանալ :
 Իսկ երբ կոտորածն սկսեց ի Մուշ ,
 Եւ աջին խումբը՝ Եղիշէն կազմեց
 Եւ Գրմբենց թաղն ու սուն պաշարեց ,

Թէ և այն պահուն Մուրաա չէր ի տան ,
 Եւ շուտով հատաւ , ձեռքում մի հրացան ,
 Իսկ աճաղ , չանցաւ զէթ մի երկվարկեան ,
 Եղիշէն խփեց Մուրատին հրացան
 Ու դեռին փռեց հասակն աննման :
 Թուրացան ձեռնք քաջի ընկերաց ,
 Եւ վառ Եղիշէն պարագլուխն թուրաց ,
 Մտաւ համարձակ ի սուն Գրմբեանց ,
 Խուզարկեց ամէն քունջ ու պուճախներ ,
 Որ իւր ցանկացած Լուսինը գտներ ,
 Որոյ սիրոյ հուր մինչ այն աստիճան
 Եզրած էր սմա , որ յիմարութեան
 Սիճակին հասած , ճշոր ևաման
 Գեռին զարնելով՝ կասէր . « Լուսին ջան ,
 Գուրս եկ , մի պահուիր , Լյօմէր քեզ զուրպան » :
 Իսկ երբ Լուսինէն չ'առաւ ոչ մի ձայն ,
 Իբրև այսահար պահ մի անկենդան ,
 Թաւալ ու զոր փռուեցաւ դեռին ,
 Եւ ազա յանկարծ կանգնեցաւ յոսին ,
 Մերկացուց սուրը , ընկաւ տան չորս զին ,
 Որոնել , գտնել զսիրուն Լուսին :
 Եւ ինչպէս զխտենք , Լուսին չէր ի տան ,
 Եւ այժմ հասեր էր ի սարն Ծածմակեան :
 Մինչ վառ Եղիշէն կայր ի վարանման ,
 Գոտայր և գոչէր կատաղած շան նման :

Արտէր պատեց Հայոց թաղ համայն,
 Իսկ քաջն յնկերաց Սուրբատայ Ղարմբեան,
 Մահն աչք առած, մտաւ հրաշխ տան.
 Եւ ի մի հարուած, վերջ առաւ կենաց
 Չար և անդգամ գողանին կատգամ,
 Ուստի և զոչեց, յհանգիւստ քեղ, ընկեր,
 Թշնամիդ ահա տանդ մէջնէ սատկեր,
 Եւ սուրբ ամուսին քո աղնիւ Լուսին,
 Եղատէ այլ ևս, կին չեղաւ թուրքին «:

* * *

Մինչ Լուսին նստած ընկեր կ'որոնէր,
 Հակառակ կողմից՝ ձիաւոր քիւրդեր
 Նեղակներ ի յուս ելան Օձմախ լեռ:
 Երբ քրտաց վերելք նկատեց Լուսին,
 Ելաւ բարձրացաւ վէր լեռան զլինն,
 Եսաց, յնով տէր իմ, մարգասէր Յիսուս,
 Ինքնասպանութիւնս մեզք չք համարեմք,
 Թող վկայ լինին քո սուրբ հրեշտակներ,
 Որ պիղծ եօթննէ եմ ցոյս վայր փախեր,
 Եւ զե չք տաննն զես և այս քիւրդեր,
 Մարմինս գէպի վար, հողիս գէպի վեր,
 Սուղարկեմ առ քեղ յ, և ապա դարձաւ,
 Խաչ մի իւր երես, խաչ մի էլ զաւկին
 Անքեց և ասաց, «նով տէր իմ Յիսուս,
 Ինչպիսիք թուրքերն և առանց թաղման

Ար մեռնիմք ահա, մեր բաց դերեղման
 Դու կնքէ խաչովդ, մինչև Հայութեան
 Հանգիստ օր շնորհես, որ դան ու դաննն
 Մեր ոսկերոտիք, դենն ի ասպան «:

Եյս վերջին աղօթք կատարեց պրծաւ,
 Լչ չ'իտակեց Լուսին, որդին դիրին առաւ
 Եւ այն բարձունքից վար դրոյեցաւ:

Մինչև որ քրդեր ինկած տեղ հասան,
 Երիւն լուայ և անշունչ դիակներ
 Տեսան և բարձին տարան Ե. դ. փանք
 Հայաբնակ զիւղ, ուր աւերումներ,
 Հրդէհ, կոտորած դեռ չէր սխեր,
 Եւ այս սուրբերու թաղման պատճառաւ,
 Եմն գէպքերէն էլ ազատեցաւ:
 Հակառակ քրդաց հայատեցութեան,
 Սոսկալի գէպքէս սաստիկ յուզուեցան,
 Եւ հայհոյանաց ամբարներ բացած,
 Լալով կ'ուղղէին առ անխիղճ Սուլթան,
 Որ անդթաբար հրաման էր հանած,
 Եւ այնքան չարեաց պատճառ էր դարձած:
 Եյս փոքրաթիւ և խղճահար քիւրդեր,
 Նոյնպէս և Մոկաց Սուրթուլայ բէկը
 Եւ Բերկրիի պեա Պօփ-Մահմաա բէկը
 Իրենց դրացի Հայոց փրկեցին,
 Որպէս հեռատես և բարի անձինք,

Իսկ պարկեշտ Լուսին՝ ըստ իւր բողձանաց
 Թաղեցաւ ընդ Քաջ-Սարգ-Հմայակին
 Մէջ Ը. դ. վանից գերեզմանոցին,
 Չեռամբ նոյն զիւզի տէր Ըսաաուրին:
 Իսկ Նշեկ երէց Հեղեղանման
 Ըրցունք թափելով՝ կնքեց այս սապան
 Հայ նահաաակաց թարմ մասունքներով
 Նոր խաչ պատրաստած Եռուկոճոպներով:
 Հանգիւստ քեզ սրբի՛կ, աննման Հայ կին,
 Ինչպէս քո պատուոյն գալչել չը կրցին,
 Նոյնպէս էլ փառահ եմ թէ՛ քո հողին
 Հրեշտակներ ուղիղ առ Յիսուս սարան,
 Ուր ընդ սրբուհիս պիտի ընդունին
 Արբազան պսակ մարտիրոսութեան:

ՊՈՆՏՈՍԻ ԽՕՍԵՅԵԱԼՔ.

Ընան խիստ ցուրտեր նոր էր սկսեր,
 Պոնտոսի Հայոց հասաւ սե օրեր,
 Ըյս ծովեղերեաց դեղեցիկ քաղբից
 Մի երիտասարդ խօսելոյն ձեռքից
 Բանած գեղի նաւ կը փախչէր սրազ,
 Արոց ետեէն ընկած հինգ վայրազ
 Լը անդուժ զինուոր՝ կը հալածէին.
 Թէև փափուկ կոյս կայր ուշափորոյս,
 Ըյլ սէր փեսային՝ առաւ նմա ոյժ,
 Ար մինչև նաւակ փախաւ լիսոյոս,
 Նաւակ մի պատրաստ կայր ի ծովեղերք,
 Արոյ վարիչն էր մի խղճահար թուրք,
 Ար զթալով այս հրեշտակաց վերայ,
 Ըռաւ իւր նաւակ; տարաւ շողենաւն
 Մեծագոր ազդին Ուռւաց պետութեան,
 Յորժամ հասածէր Պոնտոսի Հայոց
 Փրկելու համար, յորում լցուածէր
 Բազմութիւն դժբախդ, վիրաւոր անձանց:
 Մինչ նաւակավար այս խօսեցելոց
 Հասուց Շողենաւ, նոցա ընդունած
 Ընթիւ վէրքերու ճեղքուածներից

Այն քանակութեամբ արիւն հոսածէր,
 Որ եթէ նաւակ մի քիչ ուշ հասնէր՝
 Խօսեցերոց կեանք պիտի վերջ գտնէր:
 Շողեմաւն այնքան լեքն էր հայերով
 Որ վերջէն հասած խօսեցեալներուն
 Տեղ չէր մնացած, կամ թէ մի անկիւն,
 Ուր մի քիչ հանգիստ պառկեցունէին
 Եւ վերաց վերայ դարման դնէին:
 Իսկ նաւակատէրն ի վերդարձին,
 Հրացանիմ՝ զնդակ ընդունեց բաժին
 Ազգակիցներէն ի ծովեղերին,
 Ի վարձ իւր արած մարդասէր գործին:

ՅԱՌԵՐԱԿՈՒՆՆՍ ՀԱՅՈՑ.

ՌՎ էր այն մարդ՝ որ մէջ աւերակաց
 Միակ և տխուր, ձեռք զրիչ բռնած,
 Հայ բլատակաց պատկերներ կ'առնէր,
 Եւ ամեն քայլին՝ այս կը հարցանէր:
 «Ո՛ւր են, ո՛հ, ո՛ւր են սոցա նախկին տեարք,
 Ո՛րք ուրան, զուարթ կը պարսպէին
 Իրենց արհեստին և առևտուրին,
 Ո՛ւր են՝ ուսուցիչք այս սուրբ տաճարաց,
 Ո՛ւր են քահանայք, ո՛ւր են ժողովուրդք
 Այս այրած, բլած սուրբ եկեղեցեաց,
 Ո՛ւր են անթիւ հօտք, նախիրք կենդանեաց,
 Ո՛րք արածէին այս լեռներ, ձորեր,
 Ո՛ւր են այն հնձող ժիր ժիր մշակներ,
 Ո՛րք պարերդերով քաղէին հունձքեր,
 Ո՛ւր են երկրագործք և պարտիպաններ,
 Ո՛րք բահ ու բրնձ, միրաս և սոց
 Միշտ ձեռքեր բռնած՝ կը մշակէին
 Այս սղազեցեալ պարտեղ և այգին:
 Սոյն ոսկերոտիք՝ արգեօք անոնց չէ՞ն,
 Ո՛րք ցորենի պէս խիա-խիա ցանուեր են,
 Ահա այսպիսի խօսքեր կը խօսէր,

Եւ իւրաքանչիւր աւերակ վայրերը,
 Եւ նոցա նախկին տեարց անունները,
 Սե սե զրերով կ'արձանադրէր:
 Եւրդեօք ինչ մարդ էր, ուսա՞ի եկեր էր,
 Որ ամեն տեղաց անուններ գիտէր,
 Եւ կարուածատեարց քաջ կը ծանօթէր,
 Եւաջնորդողի երբէք պէտք չ'ունէր:
 Եւս արագազիր, մարդէր, հրեշտակ էր,
 Ինչն՞ մեղմածայն այս հարցեր կ'անէր,
 «Ո՞ւր են, ո՞՛հ ո՞ւր են ճշմարիտ հայեր,
 Նոցա յաջորդներ երբ պետի յառնեն
 Եւ իւրեանց ձեռօք սոյն աւերակներ
 Նախկին ձեւերով շինեն զարդարեն:
 Եւրդեօք պիտի գայ այն օր, ժամանակ,
 Որ ամէն հայու ճշմարիտ զաւակ
 Օգայ ու գառնայ դէպի Հայաստան,
 Եւ սրտով, հողւով կապուէ վեր իւր տան,
 Եւրդեօք իմ աչքերն էլ պետի տեսնան,
 Որ 'ի Ռուսաստան ե 'ի Պարսկաստան,
 Յամերիկայ ե 'ի Պուրկարիստան,
 'ի Պաղղիս ե 'ի Հին Յունաստան
 'ի Պերմանիս ե 'ի Հնդկաստան,
 յ'սորեստան ե յաշխարհս զանազան,
 Հին ե նոր գաղթող՝ համարիւնս Հայկեան,
 Եւս հողի վերայ՝ գառնալ կարենան,

Ո՞ք պժմ նանդուխդ, այլոց ճիտ ծուած,
 Կը մուրան յանարդ, ե մի կտոր հաց,
 շնն կարող շահել իւրեանց զաւակաց:
 Ո՞հ, ի՞նչ խեղճ վիճակ ունին այն տուներ,
 Ո՞ք ի Հայաստան էին հողատէր,
 Եւ հարստութեան ամեն վայելքներ,
 Ունէին առատ ե օր չէր լիներ,
 Որ ինքնակոչ հիւրս չէին կերակրեր,
 Եղով ե սերով, մեղրով ե կաթնով,
 Խակ նոցա որդիկ, իրենց խեղճ խելքով
 Ենթի կ'մնան պժմ օրերով:
 Ո՞հ, ս՛վ տէր իմ տէր, Եստուած պետական,
 Ինչո՞ւ ամեն ազգ իւր ազատութեան,
 Վրոշակը պարզեց, ե պժմ փառաւոր,
 Օր ե կեանք ունին ե թէ թաղաւոր,
 Ինչո՞ւ մեր խեղճ ազգ՝ հակառակ իւրեան,
 Մեծ զհսոցութեան ե թափած արեան,
 Չը կրցաւ հասնել իւր անցեալ փառաց:
 Մինչև ցե՞րբ հապա մըլեռանդ թըքաց
 Ծանր լուծ կրենք, մինչև ցե՞րբ Սուլթանք
 Եւ Մահմատական զանազան ցեղեր,
 Մանաւանդ Հայից զարձած փառ Վիւրդեր
 Տանջեն մեր որդւոց, զրաւեն մեր հողեր.
 Եւրդեօք մենք վճառ ենք քան զՔ'չուններ
 Կամ արեւպաշա ազէա Եղբիներ:



Բաւ է այլ ևս տէր, տուր մեզ այն կարիք,
 Որ կարող լինիմք Աւետարանիդ
 Բարձր դասերուն և օրինակիդ
 Հետևող լինել, որով իբրև մարդ,
 Այս աշխարհի մէջ սուրբ յայտապրիդ
 Համաձայն լինիմք, որպէս օրէնքիդ
 Հետևող մե՞ծ, փոքր Վրիստոնեայ ազինք ։



ԾՊՏԵԱԼ ՎԱՃԱՌԱԿԱՆՆ.

Վրդի Հագուստով ծպտեալ մի իշխան,
 Մտածեց գնալ Բերայից ի Վան,
 Այս վաճառական՝ ամեն քաղաքներ
 Ունէր հաշիւներ, հարուստ ընկերներ
 Իւր իբրև խելօք անձնաւորութիւն,
 Լաւ նկատեց, որ կառավարութիւն
 Իւր ընթացք փոխեց, նոյնպէս Վրդութիւն
 Բնդ Հայս ունեցած իւր նախկին բարքեր.
 Ուտի ստիպեալ, իբր վաճառական :
 Հետեւեալ կերպով շակեց իւր բլան :
 Որ Տաճկաստանի ամեն քաղաքներ
 Ունեցած հաշիւ և բոլոր շահեր
 Վարդանար նա շուտով հաւաքել :
 Սոյն անուանի մարդ՝ ինչպէս ինք հագած,
 Նոյնպէս մշակաց կրել էր տուած
 Նորանոր զինուց ընախն ու ջոկուած,
 Տէրն և մշակունք ինչպէս Օսմանեան
 Նոյնպէս Արաբաց և Արևելեան
 Ամեն ազգերու լեզուաց և բարուց
 Խիստ հմուտ էին, որոց ի հնուց
 Օսանօթ լինելով՝ կը գործածէին

Այս լեզուն կամ այն՝ պատահած աղբին,
 Ոյք ի Հայաստան տեղ չեր մնացած,
 Որ այս միջոցներ չէին պատահած:
 Առաջին անգամ մեծ կոտորածին,
 Ներկայ գտնուան Խարբերչու թեմին,
 Ուր ամեն տեսակ տղանդաւորներ,
 Սերմ էին ցաններ վերջին տարիներ:
 Հաւատոյ հիմունք խախտեալ վիճակին,
 Հալածանք և սուրն՝ իսկոյն աղբեցին,
 Ոյք ուրացան Խաչ և Աւետարան
 Հռտով Ղուբանի պաշտօնեաց գարձան,
 Յորոց խիստ քիչեր նահատակուեցան
 Ի սէր հաւատոյն Քրիստոնէութեան:
 Հալածող աղբաց հազուստով ծարսեալ
 Այս վաճառական, տեսաւ իւր սչքով
 Թէ ինչպէս Հայոց աղօթաակեք
 Մզկիթի ձև՝ և պաշտօնէից
 Մօլի հազուսաներ էին հազուցեր:
 Տեսաւ՝ թէ ինչպէս Ազգեք, Ասորիք
 Խուժաններու հետ էին խառնուեր
 Եւ կաւարէին Հայոց շէն տուներ.
 Տեսաւ այն եղբարց, որք իրենց ձեռքով
 Հարազատ եղբարց սպանեցին սրով,
 Նոցա կարուածոց և կանանց սիրով:
 Տեսաւ, թէ ինչպէս եղբայր՝ եղբօր կին

Յատկացուց իրեն և իւր ամուսին
 Թողուց ու մատնեց Թուրքին և Քրդին:
 Լսեց և այն պիղծ հայհոյեանքները,
 Օրս կը թափէին հաւատուրացներ:
 Իերայից ի Ան անցաղիւր առնող
 Այս վաճառական, իւր ոչ խարդախող
 Բնկերներու հետ հաշիւներ փակեց,
 Եւ տուժարները Հայ նահատակաց
 Հիկազոյն արեամբ զրեց ու լցեց.
 Եւ ապա գարձաւ իւր բնիկ աշխարհ,
 Ուր իւր տեսածներ կը հրատարակէ
 Բնդ թեօք մամոյց բովանտակ աշխարհ.
 Սպասելով թէ՛ տիեզերաց տէր
 Ի՞նչ պիտի առնէ, կամ պետութիւններ
 Ի՞նչ պիտի վճռեն և գործագրեն.
 Անց հարիւր տարի չարչարուող ազգի
 Ուրբերու շլթան պիտի արձակե՞ն:

ՈՐԻՆԶՈՒՐԿ ՀԱՅՐԸ.

Հայոց աշխարհի որդեղուրի հայրն եմ,
 Ուժից սպառած ու տարիքս առած,
 Մանրիկ թոռներուս վախճան կը խորհեմ:
 Վեց հարիւր տարի քրտինք թափեցի,
 Թուրքի դառն ու ծանր լուծը կրեցի,
 Ըզդ ու հայրենիք փրկել ջանացի,
 Եսացէք՝ խնդրեմ, Հայերս ի՞նչ անեմք,
 Ո՞ր զթոռ մարդկանց դռները զարնեմք:
 Վանէն մինչ Պոնտոս և անտի ցԵրձէշ,
 Տիգրանակերտէն մինչ Սասուն, Բաղէշ,
 Արախի տալով քար ու քանդ արին,
 Հայոց աշխարհի քաղաքներ, զիւղեր,
 Ինչ կորիչ տեսան, հրաղէնով զարկին,
 Հարսներ ու կիներ, կոյս օրիորդներ
 Բռնաբարութեամբ գերեվարեցին,
 Իսկ յղի կանանց փորեր ճեղքեցին,
 Եւ նոցա սաղմեր ազուցած ի սուին
 Ի վառման թոնիրս խորոված արին:
 Ժամատունք, տաճարք, գերեզմանք, խաչքարք,
 Պղծագործութեամբ անհետացուցին,
 Հաւատոյ պաշտպան վարդապետները,

Երի և արթուն Վահանաները,
 Մորթազերծելով մարտիրոսեցին,
 Իսկ թոյլահաւասան թուրքացուցին,
 Պարսկներ ճերմակ, կանաչ կապեցին,
 Եւ Հայոցս տան ճրագ՝ արեամբ շեջուցին:
 Եսացէք խնդրեմ, և ըն:
 Ընդութ եւրոպայ, հերիքէ լռես,
 Պահմը թող շահերդ և ել ի հանդէս,
 Թշուառ հայերուս կրածները տես,
 Դիւանիդ աեսոյն ցե՞րբ զմեզ զոհես,
 Մարդասիրութեան խղճմանը չունե՞ս:
 Ինչ որ ուզեցին թիւրքեր ու քիւրդեր,
 Ամայ, ախամայ ճարեցինք տուինք,
 Իչ ոչ ինչ չ՛մնաց, յետ ամենեցուն
 Հըւ, հնազանդ, աշխատող որդիքս
 Եւ ամենաթանգ պատիւն ել տուինք,
 Ե՛րբ կ'պահանջեն՝ որ հաւատներս տամք,
 Ամ սուրբ Հայրենիք թողումք հեռանամք,
 Եսացէք՝ խնդրեմ, Հայերս ի՞նչ անեմք,
 Ո՞ր զթոռ ազգաց օգնութիւն հայցեմք:

ՀԱՅՈՑ ԳԱՐՈՒՆԸ .

Հայոց աշխարհի գարունն է եկեր,
 Բնութիւն համայն յարութիւն առեր :
 Հայոց աշխարհի արտեր ու դաշտեր,
 Գեռ անմշակ և խոպան են մնացեր,
 Օր լեռներ, ձորեր, այգիք, պարտեզներ,
 Հայ կարիչներու արեամբ են ներկուեր :
 Մշակ ու հօտաղ, հովիւ, դառնարած
 Իւրեանց պաշտելի վայրերից զբիւռած,
 Քաղաքաց նեխած տուներն են փակուած,
 Կամ թէ զիւղերում անկապ են կապուած,
 Օջգամ՝ երինջ չունին խեղճեր, որ լծեն,
 Եւ արեամբ ներկեալ դաշտերը ելնեն,
 « Լըր եկէ » ու « Պօպօ » երգօք վար վարին :
 Գիւղացի հայրը ո՞ր օրն էր տեսած,
 Որ իւր զաւակունք մնային անհաց .
 Իսկ այսօր քաղցած, լալով խնդրեն հաց :
 Ըստուած, ոյ Ըստուած, զիւղական մանկանց
 Ըղաղակն ու լաց և նոցա ճնողաց
 Վերմեռանդ աղօթք՝ անտես մի՛ առներ,
 Ըյս անվերջ ցաւոց վախճան մը շնորհիւր,
 Օր իբր անզօր մարդ, չեմք կարող տանիլ :

Լը լցաւ թիւր զանազան չարեաց,
 Օրս թիւրք պետութիւն առնել հրամայեաց,
 Ի վերայ անմեղ Հայ հպատակաց :
 Հայոց աշխարհի ո՞ր ցաւեր պատմեմ,
 Պատառող դայէ վախցող ոչխարներ,
 Ինչպէ՞ս կը փախչեն դէպի հովիւներ,
 Ըյնպէս ամեն օր խումբ - խումբ զիւղացիք,
 Մերկ ու կիսամեռ կ'ընցուին քաղաքներ,
 Ոմանք հայրերը և ոմանք մայրեր,
 Են, որ ամուսինք, են՝ որ զաւակներ,
 Ըրևու առջև անթաղ թողուցած,
 Ի լաց և ի սուգ քաղաքներ խուժած,
 Կամ լերանց խորշերն են ապաստանած,
 Նման անհովիւ՝ մորթեալ խաշանց,
 Որոց կարծիքով՝ ապահով վայրը,
 Օրքերով լեցուն քաղաքն է մնայեր,
 Խեղճեր չեն զիտեր թէ քաղաքները
 Ըւելի դէշ են քան իւրեանց զեղեր,
 Օր վաճառականք խոպտո մերկացած,
 Հարուստք՝ ամբարներ աւարի տուած,
 Ըհ ու սարսափով ի տան են փակուած,
 Ոմանք սպանուած, ոմանք բանդարիւում .
 Ոյց խեղճ զիւղացիք՝ եկեր կ'որոնեն,
 Կ'ատեն « ո՞ւր են այն առատ ձեռքերը,
 Որք շաբաթ յառաջ մեղ հաց կ'ուտային » :

«Մահատակուեր ու բանդարիուեր են»,
 Տխուր ձայներով կը գոչեն ներսէն.
 «Չէք տեսներ, ահա ոմանց ոսկորներ,
 Օորս ի կունարկունս կը կրծեն շուներ,
 Ոմանք զինուորաց գուլ սուսերք տանջեալ,
 Ստամազ եղան և անցայտացան,
 Ոմանք էլ ի կոծս և ի շղթայս կան,
 Յամօթ, նախատինք Քրիստոնէութեան»:
 Ահա քո վեճակ, խեղճ հայու զաւակ,
 Յոյսդ ո՛ւմ վրայ ես դրեր այսքան ժամանակ,
 Որդիքդ սպանող թիւրքեր ու քիւրդեր,
 Արձակ-համարձակ կը շրջին առջևդ,
 Իսկ դու լռեր ես, չես կարող խօսել
 Մոյս չարեաց դէմ՝ ոչ էլ բողոքել:
 Հասկացա՞ր արդեօք, որ պաշտօնեաներ
 Այս ամէն զիտեն, լսել չեն ուզեր,
 Ոյց պատժոյ փոխան, նուէր ու յարգանք,
 Սէր և համակրանք, պաշտօն և հրահանք
 Պարգևեն իբրև բարեաց քաջալերս,
 Որ պակաս թողած չարիքներ գործեն:
 Քանի՞մ որ մնաց, պատրաստութիւնդ տես,
 Որդիքդ սպանողք՝ պիտի դան քեզ տես,
 Շնորհակալեաց զիր պիտի բերեն քեզ,
 Որ ստորագրես, Սուլթանին զօրկես,
 Թէ «կուսակալներ և ստորագրաս

Ամէն պաշտօնեայք, քիւրդ ցեղապեաներ,
 Համիտիէներէն մինչ յեօին զօրքեր
 Իրենց զաւակաց պէս են քեզ պահեր:
 Սուս ու զրպարտանք են այն բողոքներ,
 Որ իշխանութիւն տանելու յուսով,
 Մինչև Եւրոպա ես ձայնդ հասուցեր»:
 Պիտի պահանջեն, որ հակերդ էլ տաս,
 Օղհերդ, աւերակքդ իսպառ մոռանաս:
 Մի՛ յուսահատիր, երկիւղ մի՛ կրեր,
 Ղստուածն հայրենեաց քեզ պաշտպան ընտրիր,
 Քրիստոնէաբար ցաւոցդ զխմացիր,
 Դու այդ վեճակով՝ մահ միայն զրկիր,
 Ել ինչնցդ վախնաս, որ ստորագրես
 Թշնամեցդ բերած սուս հանրագրեր:

ԱՌ ՀԱՅՈՅ ՊԱՊԻԿ.

Հայոց աշխարհի սգակիր Պապիկ,
 Եյս ամեն անցից գոյժ, բօթն առեր ես,
 Մեր խոր վերքերուն դարմանմ' ունե՞ս.
 Սրատես արծւոյ ոյժն և տեսքն ունես,
 Քան զամեն որդիքդ խիստ խորատես ես,
 Խորամաք տուր մեզ, դեռ զերծ մնացեալներս,
 Ո՞ւր յուսով ապրեմք, կամ ո՞ր զօրաւոր
 Միջոցաց զիմեմք, որ թէ վերաւոր,
 Գեթ աշխարհիս մէջ՝ լոյս ու կեանք տեսնեմք,
 Եւ պատմութեանց մէջ՝ տեղմը դրաւեմք:
 Ա իշտերս շատ են, ո՞վ իմ սուրբ Պապիկ,
 Գուրացեալ զրիչս այլ ևս չի գրեր,
 Բանաստեղծական աւիւնս էլ մարեր,
 Իսկի չեմ ուզեր գրել ու երգել,
 Եւս սեր հայրենեաց, սեր սուրբ հաւատոյ,
 Սէր արիւնաներկ մարտիրոսներու,
 Ժուռիոճնպամեռքս անուն ինձ գրել,
 Եւ զայն սգազիր Հայ ազգիս ձօնել:
 Ենունս, մականունս պատկառիմ գրել.
 Թէ եմ ես Նշիկ, ուխտիւ քահանայ,
 Ո՛հ, էլ չեմ նշիկ, ոչ էլ պաշտօնեայ,
 Օ՛ր ոչ ազգ մնաց և ոչ Հայրենիք.
 Ոչ էլ ջարդողաց ասող, ո՞ր էլ հերեք:

ԱՌ ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՒՂԻԿՈՍՆ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ.

Ե ստուածն ողորմած
 Ռ աբւոյդ ընարութեամբ,
 Վ արանեալ Հայոցս,
 Ե ըջանիկ առնել,
 Հ րաշիւք հաճեցաւ,
 Ե ուքելաշնորհ,
 Փ սօքատեաց Հայրիկ:
 Ե հա ազգն համայն
 Ռ ահացոյց հովիւ
 Ա աթուղիկոսիւ,
 Ե նվերջ յարգանօք
 Թ ափէ սեր, կարօտ,
 Ո զջոյն սիրավառ:
 Գ ամբար լուսատու,
 Ի քեզ եմք փտաս.
 Ա եամք և ի նոյն յոյս,
 Ո ը Վ եհափառ և
 Ս ըբազնազոյն Տէրդ
 Կ ստիս ամն ձիգս,
 Ե Ե թուն Հայոց

Մ այր Արարատեան :
 Ե լանի թէ կեանքդ
 Ն որդի որպէս
 Ը ըծւոյ մանկու թիւն ,
 Յ ուսատուդ որբոց ,
 Ն եղեալ ազգայնոց
 ի այրիկ սրբազան :
 Ը ստուածազօրիդ ,
 Յ երգս այս մաղթեմք ,
 Ո ըղիական և
 Յ աւ ՚ի սիրտ ձայնիւ :
 Տ էր , առւ՛ր , ազաչե՛մք ,
 Է իդ յուսացող
 Բ աբունապետին
 Մ երոյս Հայրենեաց
 Կ ար և զօրութիւն ,
 Բ ոտել Հանապաղ
 Տ եառնդ մեր փրկչի
 Ի սկ արեամբ գնեալ
 Չ արչարեալ որդիք :
 Խ ըիմեան զարմէ
 Բ ամից Հայ ազգի
 Ի մի ձայն ընտրեալ
 Մ կրտիչ Ս եհին
 Ե ըկար կեանք շնորհեա :

Ը ըդ՛ ո՛վ տէր Յիսուս ,
 Ն որ ուխտիդ մանկանց
 ի այցուացք , պաղատանք ,
 Ը նաեւ մի՛ առներ ,
 Յ որոց և Հայցե՛
 Բ ուպ որդի նորա
 Ի պատարագել
 Կ ուսածին դառնիւդ :
 Ն ուէր՛ ամանոր ,
 ի ազար ութ Հարիւր
 Ը լել ինսուն եօթն ,
 Յ ամի ծըննդեան
 Բ աբունւոյ փրկչի
 Ե ըզեաց երգս այս
 Ն ժգեհ Հընի երէց :
 Ե ըկիրն Պարսից
 Ը պատան եղեալ
 Յ աւալի ազգին
 Յ ոյս տալ և ասել ,
 Օ ըն և Ժամանակ
 Բ ենական փրկչին ,
 Ի սկապէս եհաս ,
 Ն որ տարւոյս ի շնորհ
 Ե լանել ի յայց
 Ը զգիս Թորգոմեան :

Լ ուժանել թէև
 Ն ուստուլթեանդ կապ
 Շ ուտափոյթ, է ծանր,
 Ի սկ համբերատար
 Կ աթուղիկոսն մեր,
 Ք սկէ գայն յօժար
 Ե նձուրացաբար:
 Զ աւանն որ ի քեզ,
 Ե գզ իմ Երամեան,
 Ն ա գքեզ փրկէ,
 Ե պահէ՛վ լեր դու,
 Յ անուն Յիսուսի
 Է ր զի դու ցայսօր
 Օ տարաց ձեռօք
 Գ եկա՛վարեցար:
 Ե ստանօր գիտեա՛,
 Շ նորհ մե՛ծ է ընդ քեզ,
 Ե թէ ի յերկունսդ
 Ե մենայն ցաւոց,
 Ն եզուլթեանց յաղթես:



2013

14709

